ՄԵԿՆԱՐԿԵԼ Է ‘ՍԻՐԻԱՀԱՅԵՐԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ’ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ

04.02.2014 12:36

ՀՀ փաստաբանների պալատը այսօր՝ փետրվարի 4-ին, մեկնակել է ‘Սիրիահայերին իրավական օգնության’ փաստաբանական ծրագիրը: Այդ կապակցությամբ ‘Արմենպրեսս’ պետական լրատվական գործակալության մամուլի ակումբում ՀՀ փաստաբանների պալատի նախագահի ծրագրերի գծով խորհրդական Զինավոր Մեղրյանը ներկայացրել է ծրագրի մանրամասները:

Պալատն անվճար իրավաբանական խորհրդատվություն է տրամադրելու Հայաստանում ապաստանած սիրիահայերին: Ըստ Մեղրյանի,-‘**Առաջին փուլով Փաստաբանների պալատում իրականացվելու է սիրիահայերի իրավագիտության բարձրացմանն ուղղված անվճար իրավաբանական խորհրդատվություն: Երկրորդ փուլով սիրիահայերին հուզող հարցերի շրջանակը կամփոփվի արևելահայերեն ու արևմտահայերեն ձեռնարկում, որն անվճար կտարածվի սիրիահայերի շրջանում**»:

Զինավոր Մեղրյանը անդրադառնալով սիրահայերին հուզող խնդիրներին՝ նշել է, որ ‘**Դրանց շրջանակը շատ լայն է՝ անշարժ գույքի վարձակալման փաստաթղթերի ձևակերպումից մինչև վարորդական իրավունքի վկայականի ստացում: Վստահ եմ, որ այս խորհրդատվության արդյունքում սիրիահայերին հուզող հարցերի շրջանակն էլ ավելի կընդլայնվի**»:

‘Ֆեյսբուք’ սոցիալական ցանցում ստեղծվել է ՀՀ փաստաբանների պալատի «Սիրիահայերին իրավական աջակցություն» ծրագիր (https://www.facebook.com/groups/566725576751267/):

Սիրիահայ այն հայրենակիցները, ովքեր չեն կարողանա այցելել Փաստաբանների պալատ, նրանք հարցերը կարող են գրառում կատարել խմբում և կստանան իրենց հուզող հարցերի պատասխանները:

Նշենք, որ օրեր առաջ ՀՀ փաստաբանների պալատում նախագահ Արա Զոհրաբյանը և ծրագրի համակարգողները հանդիպել են շուրջ 30 սիրիահայերի և նրանց հետ քննարկել ծրագրի մանրամասները:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })